

«ՀԱՄԼԵՏԻ» ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Շիքսափերի «Համլետ» ողբերգությունը այն երկն է, որի լավագույն թարգմանությունը ազգերը իրենց լեզվի ու գրականության համար պարհանք են համարում:

Այսպիսի երկը չէր կարող մշակութապաշտ հայության ուշադրությանը չարժանանալ: Շիքսափերի անունը մեր գրականության մեջ հիշատակվել է XVII դարում, իսկ «Համլետի» մասին խոսք է եղել 1821—1823 թվականներին Կալկաթայում հրատարակվող «Շտեմարան» շարաթաթերթում, այն ժամանակ, երբ մեր նոր գրականությունը իր երկունքի մեջ էր:

Այս շրջանում «Համլետի» հայերեն թարգմանության մասին խոսք լինել չէր կարող: Համաշխարհային շատ մեծություններ նոր-նոր փորձեր էին անում իրենց մայրենի լեզուներով թոթովել «Համլետը», երբ այդ լեզուները անցել էին նոր գրականության երկարատև ու ծաղկում մի ժամանակաշրջան:

Ամեն մի մարդ, ինչ աղքից էլ լինի, երբ մտադրվում է որևէ նշանավոր գեղարվեստական երկ թարգմանել, շատ լավ հասկանում է, որ նույնիսկ ամենաճիշտ թարգմանությունը ճշմարիտ թարգմանություն չէ, եթե թարգմանիչը չի ըմբռնել ու իր լեզվով չի վերամարմնավորել հեղինակի ոճը:

Գեղարվեստական երկի թարգմանության առաջին նախապայմանը այդ երկի ոճի ստույգ զգացողությունը և հարազատ վերարտադրությունն է: Թումանյանը շափականցելով ասում է, թե գրականության համար կարևոր այն չէ, թե գրողը ինչ է ասում, այլ ինչպես է ասում: Գուցե այս ինչպես անվերապահորեն թարգմանությանը վերաբերի: Արդար մենք ընթացքում ցուց կտանք թարգմանական որոշ վրիպումներ ու շեղումներ, սակայն դրանք չնշին իսկ շափով չեն ազդում Մասեհյանի

վերաստեղծած այն հոգակապ ոճի վրա, որով պսակավորված է նրա թարգմանած «Համլետի» հայերենը:

Հնարավո՞ր էր, արդյոք, «Համլետի» տուազին իսկ թարգմանությամբ այսպիսի ոճ ստեղծագործել, զուցի և հնարավոր էր, բայց այդպես չեղավի «Համլետի» կատարյալ թարգմանությունը պահանջում էր նաև խաղաղաբառական մի երկարատև ժամանակաշրջան:

Այս երկի հայերեն առաջին թարգմանությունը ձևուարկվեց 1862 թվականին և մի մասը տպվեց «Փիմակումք» Հայտնի չէ, լրիվ է թարգմանվել, թե ոչ: Լրիվ թարգմանությունը կատարվել է 1880 թվականին Սենեքերիմ Արծրունու ձեռովով, որը հաջող թարգմանություն չէ և լույս է տեսել 1889 թվականին: Հիշյալ թարգմանությունը չի բավարարել ժամանակի պահանջները: Համլետի խոսքերը Աղամյանը իր համար վերափարզմանել և խաղացել է այդ վերաթարգմանությամբ: Պիեսը 1884 թ. վերստին թարգմանել է Ավ. Եղեկյանը, բայց այդ թարգմանությունը մնացել է անտեսությամբ:

Սրանք «Համլետի» թարգմանության նախափորձերն էին: Ամեն մի ժողովրդի գրականության համար էլ նման մեծագույն ստեղծագործությունների թարգմանությունները ունենում են իրենց նախափորձերը, մինչև որ հրապարակ է գալիս մի բազմաշնորհ մարդ, որ իր մեծ արվեստով այդպիսի մի ստեղծագործություն դարձնում է իր ժողովրդի սեփականությունը: Այդ մարդը Հովհ. Մասեհյանն էր, որ դարձավ «Հայ գրականության և լեզվի մեծ երախտավորներից մեկը»:

Ծերսպիրի առաջին երկը, որ նա թարգմանեց ու տպագրեց 1894 թվականին, «Համլետն» էր: Այս թարգմանությունը գրական շրջաններն ընդունեցին ցնծությամբ: Նույնիսկ այնպիսի մի նրբաճաշակ արվեստագետ, որպիսին էր Հովհ. Թումանյանը, խիստ բննադատությամբ հանդերձ, ողջունեց այդ թարգմանությունը և համարեց մի նոր երևույթ մեր թարգմանական գրականության մեջ: Սակայն հետադան ցույց տվեց, որ այդ թարգմանությունը նույնպես մի նախափորձ էր, թեև ավելի հաջող, քան նախորդ փորձերը: Զմոռանանք նշել, որ 1899 թ. «Համլետը» հրատարակվել է արևմտահայերեն Հ. Բարագլանի թարգմանությամբ:

«Համլետի» թարգմանությունը Մասեհյանը սկսել է 1892 թ.: Նույն թվականի սեպտեմբերի 21-ի թվակիր նամակով (ուղղված Հ. Առաքելյանին) Մասեհյանը գրում է. «Համլետի» երեք արարվածները կազմած այսօր կամ հինգշաբթի օր կուղարկեմ «Մշակի» խմբագրատունը...

Մինչև տասնուշինք օր մյուս երկու արարվածներն էլ կօրինակեմ և կուղարկեմ։ Ուրեմն «Համլետի» Մասեհյանի թարգմանությունը սկսվել և վերջացել է 1892 թ., որովհետև 1893 թ. հոնվարի 4-ի նամակում Մասեհյանը նույն Հ. Առաքելյանին գրում է, որ վերջին մասը դեռ չի արտադրել և նույն թվականի մարտի 6-ի նամակից իմանում ենք, որ այդ վերջին մասը արդեն թե՛րանից ուղարկված է Թիֆլիս։

Իր այդ թարգմանության մասին «Համլետի» 1921 թվականի հրատարակության «Նախաբանում» Մասեհյանը գրում է. «Ավելի քան քառորդ դար է անցել այն օրից, երբ մենք առաջին անգամ փորձեցինք «Համլետի» հայերեն թարգմանությունը տալ։ Այդ նախափորձը, չնայելով իր մեծ թերովթյուններին, այնքան խրախուսիչ ընդունելություն գտավ հայ գրագետների և բեմի կողմից, որ զա մեզ քաջալերեց ավելի լուրջ կերպով զբաղվելու Եեքսպիրի թարգմանության գործով։

Մեր նախկին թարգմանությունները հարկ համարեցինք ոչ թե լոկ վերաբննել, այլ այնքան հիմնական փոփոխության ենթարկել, որ կարեցի է ասել թե նոր թարգմանությունը է կատարված, որովհետև վերջին երեսուն տարվա ընթացքում ոչ միայն շեքսպիրյան գրականությունը դանազան լեզուների մեջ աճագին շափով զարգացել է, և մենք առիթ ենք ունեցել ծանոթանալ այդ երկերի հետ, այլև մեր անձնական հայցքները թարգմանության եղանակի մասին որոշ շափով փոխված են։

Առաջին թարգմանությունները կատարված էին Վիկտոր Հյուգոյի ազդեցության տակ, որ սրբապղծությունը էր համարում որևէից խոտորում շեքսպիրյան «Սուրբ գրքի» բնագրի բառից։ Բայց երբ մենք ծանոթացանք ավելի հաջող թարգմանությունների հետ, ի միշտ այլոց, Ծիկելի գերմանական թարգմանության հետ, տեսանք, որ լավ թարգմանիչները զեկավարվել են բոլորովին ուրիշ սկզբունքով և իրավամբ մտածել են, որ գեղարվեստական թարգմանությունը շատ անգամ պահանջում է որոշ խոտորում բնագրի բառական հանդերձից՝ ոգին և իմաստն ավելի հարազատորեն տալու համար։

Խնչակես ասվեց, 1921 թվականին Մասեհյանը հրատարակեց իր նոր թարգմանությունը, որը դարձավ Եեքսպիրի «Համլետի» մի երկրորդ ստեղծագործությունը հայոց լեզվով։ Մեր հայացքով այս թարգմանությունը ոչ միայն մի բացառիկ գեղարվեստական վերաստեղծում է, այլև հայերեն լեզվական արվեստի մի փառավոր կոթող, որին դեռ չի հասել մեր լեզվական թոփշքը։ «Համլետի» թարգմանության լեզվական արվեստի գաղտնիքները մի ուսումնասիրությամբ դժվար է բացահայ-

տել. զրա համար անհրաժեշտ են այլևայլ բնույթի մի քանի ուսումնաւորականը, որոնց հիմքերը նոր-նոր են դրվում։ Այդ հիմքերից մեկն էլ, մեր կարծիքով, Մասեհյանի թարգմանած «Համլետի» բառարանն է, որը մենք կազմել ենք և որի մասին ուզում ենք մի քանի խոր տնել Ծեփսպիրով Հետարքրրվաղ մեր ընթերցողներին։

Երկար տարիներ մտածում եինք ուսումնասիրել Հովհ. Մասեհյանի լեզվական արվեստի գաղանիքները, բացահայտել զրանք և միաժամանակ մասսամբ հաստից այն մեծ կրախափերը, որ Հովհ. Մասեհյանը ունի հայ զրականության հանգիւու Ահա այդ ընթացքում միտք հղացավ կազմել նուև Մասեհյանի թարգմանած «Համլետի» բառարանը։ Այդ միտքը սպեորեց մեկ ամենից առաջ նրանով, որ զա կօգներ ավելի խոր թափանցելու թարգմանչի լեզվաստեղծագործական աշխատանքի ընթացքի ու գաղանիքների մեջ։ Չեսքի տակ ունենալով այդ բառարանը, որոշակի դիտելիք ու պատկերացում կունենալիքն այդ անձա՞ն ստեղծագործության և անմա՞ն թարգմանության բառապաշտարի ու իմաստարանական համակարգի վերաբերյալ, մի քան, որ բանասիրական հետարքրրությունների սահմաններից շատ է անցնում և ստանում է զուտ զիտական արժեք ու նշանակություն։

Մենք միաժամանակ մտածում էինք, որ «Համլետի» հայերեն թարգմանության բառարանը հարուստ նյութ կտա նաև հայերենի ընդհանուր բացարարական բառարանի համար, մի հանդամանք, որ հայ բառարանագրությունը չի կարող աշբաթող անել։ Չենք թարցնում ասելու, որ մեր հետարքրրությունը գրգռում էր նաև գործի բանասիրական կողմը, թէ արդյոք «Համլետ» ողբերգության մեջ քանի՞ բառ է գործածված, ո՞ր կարգի բառերն են ավելի շատ և այլն։ Սա դառնալու էր զուտ բաղդատության եղր համաշխարհային և հայ գրականության նշանավոր երկերի առանձին բառապաշտրների քանակի մասին զաղափար տալու համար։

Եվ քանի որ մեր խանդավառությունը շատ բուռն էր, և աշխատանքի ծավալի վերաբերյալ մեր պատկերացումը միանդամայն միամիտ ու անիրական, անմիջապես գործի անցանք՝ ենթադրելով, որ այդ աշխատանքը մեզանից կիմի ընդամենը ամիս ու կես կամ առավելն երկու ամիս ժամանակ։ Բառարանը կազմելու վերաբերյալ մենք ունենք որոշակի սկզբունքներ։ Գլխարարությունը հետո նշվելու էին բառի ինչ խոսքի մասին պատկանելը, ապա իմաստային բացատրությունները ըստ մանրամասն առումների և հետո այդ առանձին առումների համար

Համապատասխան օրինակներ: Սկզբնապես մենք ծրագրել էինք եղած դեպքում առնվազն երկու օրինակ բերել, իսկ եթե բառը գործածված է երեք, չորս անգամ (բայց ոչ ավելի), ապա ոչ մի օրինակ բաց շթողներ: Աշխատանքի ընթացքում նկատեցինք, որ գործը ընդարձակվում է, սկսեցինք օրինակները պահպանեցնել հասցնել ամենաքչին, այսինքն՝ մեկ օրինակի:

Երբ Ա տառը կազմեցինք վերջացրինք, գործն սկսելուց արդեն անցել էր երկու ամիս: Այդ ժամանակ զգացինք գործի մեծությունն ու ծավալը, բայց արդեն ուշ էր, պետք էր սկսածը վերջացնել:

Բառարանի ժավալը մեր կանխատեսումը գերազանցեց երեք անգամ: Նկատի ունենալով երկի ժավալը, մենք կարծում էինք «Համլետը» կոռնենա ոչ ավելի, քան 1500-ից երկու հազար բառ, բայց այստեղ էլ մեր ննիթադրությունը սխալ դուրս եկավ:

Լեզվաբանության մեջ հայտնի է, որ բոլոր գրողների մեջ ամենից շատ բառեր գործածել է Շեքսպիրը: Շեքսպիրի բառապաշտիքի հաշիվ-ները, որ կատարել են տարբեր մարդիկ, խիստ հակասական են: Այդ հակասությունը բացատրվում է անզիւճենի յուրահատկությամբ և հաշվողների մոտեցման սկզբունքների տարբերությամբ: Ոմանք Շեքսպիրի ողջ բառապաշտը հաշվում են 15 հազար, ոմանք՝ 24 հազար: Այս թվերի խիստ անհամապատասխանությունը կասկած է հարուցում այդ հաշիվների ճշտության նկատմամբ: Կան համաշխարհային նշանակություն ունեցող մի քանի այլ երկերի ու գրողների բառերի քանակական տվյալները: Միլտոնը գործածել է 7 հազար բառ, Հոմերոսի երկու պոեմները ունեն մինչև 9 հազար բառ, հին կտակարանում հաշվված է 5642, իսկ նորում՝ 4800 բառ:

«Համլետի» հայերեն թարգմանությունը, որ ինչպես ասվեց, ընդամենը լորս ու կեսից հինգ մամուկ ժավալ ունի, պարունակում է երեք հազար ութ հարյուր հիսում բառ: Մի պիսի համար այդպիսի բառապաշտը խոսում է տվյալ երկի հարուստ բովանդակության և կյանքի բազմակողմանի ընդգրկման մասին:

Ընդհանրապես այն երկերը ունեն հարուստ բառապաշտիք, որոնք լայն ընդգրկումներ ունեն և չեն սահմանափակվում մի որոշ բնագավառով: Այդ կողմից զարմանալի բացառություն է կազմում մեր նարեկացին, որ չնայած իր նյութի միակողմանիությանը, գործածել է մոտ 7 հազար բառ: Բառապաշտիքի այս զարմանալի հարստությունը պետք է բացատրել մեր հեղինակի բազմաթիվ ու բազմազան համանիշ բա-

սերի նկատմամբ ունեցած մեծ նախասիրությամբ. մի իմաստի համար՝ նա հաճախ շարում է հայոց լեզվի գարերով կուտակած համամիջները և չի դադարում, մինչև որ չի սպասում տեղյալ բասի համար հայերնի ընձեռած համանիշային հնարավորությունները:

Եկապիքը «Համլիաթ» մեջ նույնպես զիմում է համանիշ բառերի օգնությանը՝ ուժեղացնելու համար իր խոսքի նշանակությունը, մեծացնելու ցաման, գորովանքի ու կատաղության կրքերի պոռթկումները, բայց նա չափավորության սահմաններից երբեք չի անցնում: Այս չափավորությունը վերաբերում է ոչ միայն հոմանիշը բառերի բանակին, այլև ուժարանական այդ հզանակից օգտվելու հնարանքներին, որ չարաշահման գետքում պատճառ է գառնում ավելորդ բազմաբառության, մի բան, որ Եկապիքի համար խորթ ու մերժելի մի երեսոյն է:

Որիև երկի լեզվական ու ոճական բարձրագույն արժերն ու նշանակությանը միայն բառապաշարի բանակով չի պայմանավորվում: Կանակ բառիմաստների ու իմաստացին նրբերանգների հանգամանքը, որն այդ բանակին արգիստի զույն ու կեցպարանը է տալիս: Մի հոգմից իմաստների բազմազանությունը և մյուս կողմից նրբությունների նորությունն ու անսպասելի հեռազնացությունը, լեզվի համար ապահովում են զորիկ, խոր, հարուստ իմաստային համակարգ: «Համլիաթ» հայերն թարգմանությունը այդ առումով մի զարմանալի վկայագիր է թարգմանիչ Մասեհյանի նուրբ հաշակի և մեր լեզվի հարստության, ճկունության ու արտահայտչական բարձր կարտզությունների: Փորձենք մեր միտքը հասատել մի բանի օրինակներով:

Լավ բառը «Համլիտում», ըստ մեր կազմած բառարանի տվյալների, ունի 23 նշանակություն, այսպես՝ 1. Հարմարություններով օժտված: Խելքեմ հոգ տանել, որ այս գերասաններին լավ բնակարան տրվի (էջ 45): 2. Գործածության համար հարմար, աջլիկ: Այս մեկը (սուրբ) լավ է (էջ 108): 3. Եր գործը լավ իմացող, փորձված վարպետ: Այս, տեր իմ, լավ դերասան էլ համարվում (էջ 55): 4. Հաճելի, ձեռնտու: Լավ զարափար է աղջիկների սրունքների մեջ ձգվիլ (56): 5. Բարություն, առարինություն՝ աղնվություն արտահայտող: Լավ խորհուրդ է (407): 6. Մոտիկ, սերու: Բայց, տեր իմ, ում հետ է կարող գեղեցկությունը ազելի լավ հարաբերություն ունենալ, քան թե առաքինության հետ (51): 7. Անթերի, լիակատար: Հազիվ երկու օր էր, որ ծովի վրա էինք, երբ մի երւականավ, լավ պատերազմական պատրաստուրյամբ, սկսակ մեր ետեիցն բնկենել (87): 8. Ուրախ, զվարճալի: Այս գիշեր ձեզ:

հետ լավ խնջույք կանենք (34): 9. Գեղեցիկ, սիրուն: Պետք է բնության բանվորները երան ստեղծած լինեն և այն էլ ոչ շատ լավ, այն աստիճան գարշելի նմանություններ են դրանք մարդկային ցեղի (54): 10. Արտահայտիլ, ճիշտ, տպավորիչ: Տեր իմ, շատ լավ արտասանեցիք, լավ շեշտով և շատ օրինավոր (44): 11. Մանրամասն, ստույգ բոլոր կողմերով: Աւրիշին լավ նաևաշել՝ նշանակում է ինձն իրեն նաևաշել (195): 12. Դիպուկ, տեղին: Հա, լավ ասացիր, շատ լավ ասացիր (29): 13. Ուշագիր, հետևողականորման: Խնդրեմ մատից հնեսիր երան, լավ հսկիր վրան (82): 14. Լրիվ, խիստ երբ դուք շարժումից տաքացած լինենք և լավ ծարավեք... (92): 15. Անխափան, հաջողակ: Ասել է քե կախաղանը ենք համար լավ չզործի (95): 16. Սիրալիր, բարյացակամ: Ձեզ լավ ընդունեց: Այս, կատարյալ չենտլմենի պես (48): 17. Բավականաշափ, շատ: Միմասը դյուրագրգիռ բռներ ունեցողներին լավ կծիծաղեցնեն (41): 18. Առանց միջադիպերի, բարեհաջող: Պահպանությունը լավ հանդարտ անցավ (5): 19. Գոյականաբար: Իր, երկույթ, անձ, որ օժտված է դրական հատկություններով: Աշխարհում ոչ լավ կա, ոչ վատ, մեր մրամին է այդպես բվում (39): 20. Եղանակավորիչ բառ, արտահայտում է համաձայնություն: Լավ, վաղը զիշեր ներկայացրեք (46): 21. Արտահայտում է խոսակցությունը ավարտելու տրամադրություն: Լավ, հետապարուն (105): 22. Արտահայտում է գարմանք: Լավ, ի՞նչ պատահեց, իմ ազնիվ տերս (26): 23. Արտահայտում է պայման. ենթադրենք, ընդունենք: Անա ջուրն էնաեն է, լավ, մեկ մարդ էլ կանգնել է էնտեղ, լավ, հիմա ուշ դարձու (94):

Մենք մի շաբթ նուրբ նշանակությունները այստեղ շբերինք, դրանք ևս նշվում են բառարանում և ուր էլ կիրառվում են՝ խոսքն օժտում են արտահայտչական բազմազան նրբերանքներով: Բայց որպեսզի ընթերցողը պարզ գաղափար կազմի, թե Մասեհյանը «Համլետի» թարգմանության մեջ մեր լեզվի բառապաշտիքի ինչ իմաստային ակունքներն ու հանքախորշերն է պեղնել, ասենք, որ Ստ. Մալիսասյանի «Հայերենի բացատրական բառարանում» լավ բառի համար նշված է ընդունենք քսան նշանակություն, իսկ մեր իսկ ձեռքով կազմած հայերենի բացատրական անտիպ բառարանի մեջ նույն լավ բառի համար բերված է երեսուն նշանակություն: Սա ցույց է տալիս, թե շեքսափիրյան խոսքը իմաստային ինչ հարստություն է բիրում մեր լեզվին Մասեհյանի թարգմանության միջոցով:

Գիտական և բանասիրական հետաքրքրությունից զուրկ չի լինի, եթե

փորձենք բնագրի համեմատությամբ ցույց տալ, թե Մասեհյանը լավ բասի այս բալոր նշանակությունները անզլերինի ինչ բառերից է թարգմանել Չմուսանանը ասել, որ մենք յուրաքանչյուր նշանակության համար բերինք միայն մեկական օրինակ, իսկ լավ բառը թարգմանության մեջ կիրառված է մեկ հարյուր բառնինն անդամ: Անզլերին բնագրուած այդ բալոր նշանակությունների համար կիրառված են well, fair, very, good (ավելի լավ՝ better) բառերը:

Նույնպիսի մի բառ է մեծը, որ կիրառված է ավելի բան 16 նշանակությամբ: Այսպիս՝ 1. Զանդվածով խոշոր իր նմանների համեմատությամբ: Գանիայի արքան շպես է ըմպել ցնծալից բաժակ՝ առանց որ խելայն մեծ բնդանարք նայանք ամպերին (13): 2. Ընդարձակ, տարածությամբ լայն: Կովում են հողի մի շերտի համար, ուր բանակները տեղ անջամ շունեն նարգը վնաևու, որ բավական մեծ հանգստարան չէ, կամ ամֆոփարան (79): 3. Նշանակությամբ խոշոր՝ կարեռը եվ շատ ձեռնարկներ մեծ ու կարեռ, Ենդվում են այսպիս իրենց հոսանքից (50): 4. Հզոր, զորեղի բայց ինչպես հանախ տեսնում ենք, որ մեծ փորորկից առաջ լուս է երկինքը (44): 5. Շատ: Հասարակություն, որի մեծ մասը բնդունակ չէ ուրիշ բան բրոնելու (53): 6. Դիբրով ու դիբրով նշանավոր: Ուրեմն կարելի է հատակ, որ մի մեծ մարդու հիշատակը դեռ վեց ամիս իր մահից հետո կարող է տեսել (56): 7. Զգացման խորությամբ բնութագրվող: Թե որքան մեծ է իմ սրտի սերը, քեզ ցույց են տվել ձիգ տարիները (57): 8. Հարուստ, ունեոր: Գույց այս մարդը իր օրով մի մեծ կալվածատեր է եղել (97): 9. Թանկարժեք, թանկապին: Նա Ձեր վրա մի մեծ գրավ է բռնել (104): 10. Լուրջ, ծանր: Ինչ մեծ վտանգ է, որ այսպիս այդ մարդն ազատ բափառի (75): 11. Տարիքը առաջացած, տարեց: Այդ մեծ երեխան... խանճարուրից դեռ դուրս չի եկել (42): 12. Լիակատար, լրիվ: Եվ մեծ հույս ունիմ, որ առաքինի հասկություններդ ետ բերեն երան (49): 13. Իր շափանիշներով խոշոր: Պեսան է իմ լուրը այս մեծ խնջույքի պառուղը լինի (34): 14. Խոշոր ընդդրկում ունեցող: Շատ էլ մեծ երեխայություն պես չէ դրա համար (99): 15. Վտանգավոր: Էղ ջուր ասածը ձեր էղ տիրամեր դիակի մեծ քշնամին է (98): 16. Բարձր, զրվատական: Այնպիսի մեծ գովեստներ տվալ են հարտարությանն ու հմտությանը:

Ենթապիրի ոճի համար բնութագրական խոշոր նշանակություն ունեն կապակցությունների նրբություններն ու բազմազանությունը: «Համլետի» մեջ եվ շաղկապը կիրառված է բան տարբեր նշանակու-

թյամբ: Ավելի քան տասից մինչև տասնհինդ նշանակություններով են կիրառված որ, խսկ, երե, բայց, թե, մեջ, համար, վրա և այլ շաղկապներն ու կապերը, որոնց այդ նշանակություններից շատերը նոր են հայերնի համար և շարահյուսական հետաքրքրություն են ներկայացնում:

Մասեհյանը ամեն ինչ արել է, որպեսզի իր թարգմանությունը կատարյալ դարձնի և հասցնի Ծեղելի՝ համաշխարհային փառքի արժանացած թարգմանության մակարդակին, մի թարգմանություն, որ Մասեհյանի աշքում շատ բարձր արժեք ու նշանակություն ուներ: «Համլետի» թարգմանության կատարելության համար Մասեհյանը ի ստաս է բերել հայերնի իր անսպառ իմացությունները և մանավանդ իր ոճաբանական դարմանալի ճաշակը: Մասեհյանը «Համլետի» առաջաբանում ասում է, որ «գեղարվեստական թարգմանությունը շատ անգամ պահանջում է որոշ խոտորոս բնագրի բառական հանդերձից՝ որին և իմաստն ավելի հարազատորեն տալու համար»: Այդ սկզբունքն անշուշտ իր արդարացումը ունի, բայց թարգմանիւը քիչ է հետեւել դրան և, մեր կարծիքով, լավ է արել: Մեր կազմած բառարանում այդ շեղումների ու թերացումների մասին արվում են հիշատակումներ, ցուցումներ, դիտողություններ, որոնցից տալիս ենք մի քանի օրինակներ: Անգլերեն hold բառը թարգմանված է արոռ: Կիրշեմ, բանի հիշողությունը արոռ ունենա այս խելանեղլված զնակի միջում (26): Անգլերեն բառը նշանակում է նեցուկ, նենարան: Լավ չէ՞ր լինի, արդյոք, եթե նեցուկ բառով թարգմանվեր: Թարգմանչին խորթ ու կոշտ են թվացել հիշյալ երկու բառերը: Մի այլ օրինակ. անեղ բառը գործածված է չորս նշանակությամբ: 1. Ահավոր, սարսափազդու: Անեղ կեսարը մեռավ, նող դարձավ (99): 2. Հզոր, զորեղ: Այն տամուկ ասազը, Որ ներգործում է նեպտունի անեղ պետության վրա (8): 3. Մեծ-մեծ: Անեղ երդումներ (59): 4. Խիստ, դաժան, անդիշում: Զէ որ եկել ես դանդաղկոտ որդուդ հանդիմանելու, Որ փշացնելով ժամանակ ու կիրք, նետաձգում է անեղ երամանիդ ստիպողական գործադրությունը (69): Առաջին գործածության դիմաց բնագիրը ունի imperios: Լողինսկին այդ բառը թարգմանել է դերժանանք, այսինքն՝ վեհապետական իշխանություն ունեցող, վեհապետ: Երկրորդ նշանակության համար անգլերեն բնագիրը համապատասխան բառ չունի: Երրորդ նշանակության համար բնագիրը ունի deeply, այսինքն՝ խոր: Չորրորդ նշանակության դիմաց

բնագրի համապատասխանն է dread, որ նշանակում է սարսափելի, խիստ դաժան:

Բնագրից մասամբ հեռացած լինելով, կարծեք թարգմանական այնպիսի մեղանշում չկա, որպեսզի բնագրից շեղում որակի ինք:

Բայց մասամբ, եթե ուշադիր և բննական մարով հնը հետամտում, այդ շեղումների մեջ մասնակի հակասություններ, որոշակիության պակասներ նկատում ենք: Այսպես Ռուգենկրանցը զիմելով թագավորին ու թագուհուն, առում է: Ջեր մեծություններ վենապետական այն իշխանությամբ, որ ունին մեր վրա՝ կարող են իրենց անեղ հանույցը պարտադիր անհրաժեշտ կա, սառույզ արտահայտության սուսկան է զգացվում: Ճիշտ է, բնագրի pleasure բառը նաև հաճույք է նշանակում, բայց ճիշտ կիներ այսակեղ կամբ թարգմանել (ահ'ս նաև էջ 11):

Կամ զգիահնը ինչու օճի բառը, որ նորը է նշանակում, թարգմանված է կով բառով: Եաւ բառություն էր նոր կողմից այդպիս երեսի կովին նասպատում սպանել (էջ 56): Համբատի խոսքը վերարերում է Պոլսի կուսին և Շերսպիրը օճի գործածել է հիմար նշանակությամբ: Այս նշանակությունը հայերենում նորը բառը ավելի լավ է արտահայտում, բան նրան փոխարինող կովը:

Որոշ գեղերում թարգմանիչը ավելացնում է բառեր, դրանք հաճախ ունենում են իրենց արդարացումը. օրինակ. Այժմ էլ նոյնափիս արհաջիւմների նախազուշակներ, առաջընթացներ, որ միշտ կանհում են բախար նույրերին, նզ նախերգանքն են զալիք աղետի (3): Բնագրում վերջին երկու բառի դիմաց կա միայն օտարոց զալիք բառը: Թարգմանիչը գտել է, որ հայերենի զալիք բառը չունի, կամ որոշակի չի արտահայտում զալիք աղետ-ի նշանակությունը, որ ունի Շերսպիրի բառը ավյալ ենթարնաըրում: Ուստի աղետ բառը ավելացրել է: Երբեմն ավելացումը հանգավորման համար է և Մասեհյանը այս դեպքում ավելացնում է այնափիս բառեր, որոնք բնագրում իմաստային որևէ փոփոխություն չեն մտցնում. օր. Պոլնի առում է. Օֆելիան ամենայն հնագանդուրյամբ ցույց տվավ ինձ, բնագրով ամենայն բառը չունի: Այսպես է նաև. Մի բաղնիր Գանիոն բազավորական վեհ անկողինը Քնանց դառնա անառակուրյան և պիոն շնուրյան (էջ 25), որտեղ վեհ բառը ավելացված է:

Այսպիսի համեմատական աշխատանքը խիստ զգուշավորություն է պահանջում: Մենք հատկապես մեր ուշադրությունը սրեցինք հայերեն

Նորակազմ, նորիմաստ, քիչ գործածական և հին բառերի վրա, որպեսզի բառարանում ստույգ ու ճշգրիտ տրվեն դրանց նշանակությունները: Այսպես՝ աղմկանույզ նոր բառը թարգմանված է բնագրի turbulent բառից, որ նշանակում է կատաղի, վայրագ, անզուսպ: Շատ հնարավոր է, որ Շեքսպիրի այդ բառը հենց խկազես ունի աղմկահույզ նշանակությունը: Արդարեն, Համլետը ոչ մի վայրագություն ու կատաղություն ցույց չի տալիս: Երա խելքարությունը ավելի շուտ խոսակցությունների տեղիք է տալիս, թե որքան գեղեցիկ է շեղումը, մանավանդ որ բնագրի իմաստը չի փոխում, այլ ցայտում ու արտահայտիչ է դրսեռում:

Թերենք նույնանման մի օրինակ. Մեղքն այնպես լի է անհարակ վախով (80): Բնագրին է so full of artless jealousy is guilt. Մեղքն այնպես լի է հասարակ կասկածով: Համեմատառությունը ինքնին ցույց է տալիս, թե որքան գեղեցիկ է շեղումը, մանավանդ որ բնագրի իմաստը չի փոխում, այլ ցայտում ու արտահայտիչ է դրսեռում:

Պոլոնիուսը խրատում է կաերտին և հետո ասում է. Եվ օրինարյունս քու սրանք (խրատները) քո մեջ արգասավորե (19): Բնագրի համապատասխանությունն է արգասավորել բայի համար season կոփել, ամրապնդել: Այսուղ կարծեք հայերենի նշանակությունը որոշակի չէ. թարգմանիլը կոփել, ամրապնդել բայերը հարմար չի գտել, ուստի թարգմանել է արգասավորել բայով:

Հաճախ թարգմանիլը խոսքը հարմարեցնում է հայոց լեզվի ոգուն ու պահանջներին՝ երբեք սակայն շմեղանշելով բնագրի ճշտության դեմ: Այսպես՝ Համլետը Հորացիոյին ասում է՝

Սրե մի որոշ նաոի ժամանակ
Թափուն ոնիցը հանկարծ իր որջից դրւու շնարձակվի՝
Ապա այն ոգին, որ Անգլ տեսել ենք, մի շար ոգի է,
Եվ խորհածներս՝ Վալկանի սալից ավելի մրու (էջ 55):

Մրու բառը համապատասխանում է անգլերեն soul-ին, որ կեղտուն է նշանակում: Սալի համար կեղտուտ ածականը բնավ վայելու չէ, իսկ մրութը իմաստի ճշտության և ոճարանական առումով շատ գեղեցիկ է: Կողինսկին այդ արտահայտել է մրածո բառով, որ, թվում է, այնքան չէ հարմար չէ:

Մասեհյանը որոնել է այն բոլոր ուղիները, որոնք պետք է «Համլետի» թարգմանությունը անթերի դարձնեին: Նա խիստ զգայուն է

Եկասպիրի ոճի հանգեալ, ամեն կերպ ձգտում է զերծ պահել Եկասպիրի ոճը խորթ տարբերից, կամ հայերենի այնպիսի միջոցներից, որոնք կարող են խաթարել այն. այսպիս կահրաբ թագավորին հարանամ է, թե ինքը մի շերիմից (mountebank) լուղ է զնել, որ խօսա մահացու է: Անզիրեն հիշյալ բառը, որ իսկապես ներիմ է նշանակում, Մասեհյանը արտահայտել է շառլատան բառով:

Մի շառլատանից մի յուղ եմ զնել, այնպիս մահացու:

Իսկապես այսուհետ իմաստային մասնակի շեղում կա, բայց ոճառանորդն առզի փայլում է, և երբեք այնաեղ ներիմ բառը չէր վայելի ու հնչի, ինչպիս որ շառլատանը:

Եկասպիրի ոճին հարազատ մնալու համար երրեմն թարգմանիչը հայերեն բառը իմաստային նորոգման է ենթարկում, որ լոգվական կիրառաթյան ու մի մեղանչում չի նշանակում: Հորացիոն նկատի ունենալով ուզու հայտնությունը՝ ասում է.

Մի հյուկի է դա մեր մտքի աշխը աղոտացնելու (էջ 8):

Հյուկի բառի համապատասխանն է բնագրի տօւ, որ նշանակում է փոշեհատ (соринка): Մասեհյանը հյուկի գործածել է հնոց այդ նշանակությամբ, որ տողի մեջ գարմանալի հնչեղություն ունի:

Մեր նշած այս երեսութների համար իրեն իրական վկայություններ ունենք թարգմանչի խոստովանությունը նաև

Մի մասնիկ ժանգը բոլոր ազնիվ նյութն ապականում է

տողի համար. նա իրեն ծանոթագրություն ասում է. «Այս տողի բնագիրը աղավաղված է մեզ հասել, և հարյուրավոր ենթադրություններ են արված, առանց մեծ հաջողության. բայց ընդհանուր միտքը հայտնի է, և մենք «ժանգ» բառը չենք գործածել իր նեղ իմաստով, այլ իրեն մի փշացնող նյութ»²:

Մեզ հիացնում ու գարմանը է պատճառում այդ մարդու լեզվաընկալման խորատեսությունը. մշտապես լինել օտար շրջաններում, կտըրված մայր հայրենիքից ու մայր ժողովրդից և ունենալ այդ ժողովրդի դարավոր լեզվի հարստության, նրբության այդպիսի կենդանի ըմբռնո-

դություն ու ճանաշություն, սա, հիրավի, հատուկ է արտասովոր ձիրքի տեր մարդկանց:

Եվ, չնայած այս ամենին, կան շեղումներ, թերացումներ, որոնք չի կարելի արդարացնել: Դրանք ոչ ճիշտ թարգմանություններ են, հաճախ անխուսափելի և հատուկ ամեն մարդու, թեկուղեանա ձուլք. Մասսեանց լինի:

Ուրվականը խոսքը ուղղելով Համլետին ասում է.

Ճեղք կլինեիր քան այն նարպ խոտը,

Որ հաճախորեն արմատ է ձգում կերեի ափին (էջ 225):

Որքան էլ «Համլետին» վարժվել ենք, բայց միշտ էլ նարպ խոտ կապակցությունը լեզվական մեր ըմբռնման ու ոճաբանական ընկալումների համար մնում է խորթ ու անսովոր: Դրա բառացի թարգմանությունը հայերենում պետք է լիներ հոռ, ատռք, պարարտ, հուտքի, բայց ոչ մի գեպքում՝ ճարպ:

Համլետը Օդրիկի անբանությունը, անխելքությունն ու հարստությունը նկատի ունենալով, Հորացիոյին ասում է.

Ճենց որ մի անասուն ուրիշ անասունների տեր է դառնում, նրա ախոռը դեռու են բազավորի սեղանին (էջ 104): Ինչպես նկատելի է, այդպիսի արտահայտությունը՝ ախոռը սեղանին դնել, պարզ չէ: Ախոռը կարելի է պալատին մոտ շինել, բայց սեղանին չի դրվի: Բնագիրը ախոռ բառի դիմաց ունի ցիօ, որ նշանակում է մսուր: Ամենայն հավանականությամբ պարսկագետ Մասեհյանի համար ախոռ բառի մսուր հին նշանակությունը կենդանի է եղել: Ինչ որ է, դա վըիպում է և, մենք, որ Մասեհյանի խոսքի անձեռնմխելիությանը երկյուղածությամբ ենք մոտենում, կառաջարկեինք «Համլետի» մեջ այդպիսի սրբագրություն անել, այսինքն՝ ախոռ երկվանկ բառը փոխարինել մսուր ճիշտ համապատասխանով: Նույնամման մի շփոթություն առաջացել է քան և բրիչ բառերի թարգմանության ընթացքում: Գերեզմանի տեսարանում սրած-բառը չորս անգամ բրիչ է թարգմանված:

Նշենք նման մի թերություն ևս: Համլետը աշխարհի մասին խոսելով ասում է.

Մի պարտեզ է դա, որ քաղնան շեղած սերմի է հասել:

Պարտեզ բառը թարգմանություն է անգլերեն garden-ի, որ նշանակում է նաև բանջարանոց: Պարտեզ բառը իր բանջարանոց նշանակու-

Այսուհետեւ այժմ բացարձակորեն կորցրել է և ավել ենթարնագրում այդ բասի կիրասությունն այսօր անհասկանալի է:

Մենք, իհարկե, «Համբեաթի» թարգմանչին չենք կարող քննադատել այն բանի համար, որ նրա կազմած բառը այսօր այլ նշանակությամբ է կիրառվում։ Շատ-շատ կարելի է ասել, որ այդ բառը ճիշտ ու դիպուկ չէ կազմված։ Այսպես՝ Համբեաթ Կիրկեանարնին հանդիմանում է այն բանի համար, որ նա ձգուում է Համբեաթի դադանիքները փմանալ, նա ասում է, Ուզում ես ձայնս փորձել՝ սկսած ամենացած նոտայից մինչև ձայնաշարիս ամենաբարձրը (Էջ 62)։ Ձայնաշար բառի դիմաց բնագիրը տնի սուրբառ, որ նշանակում է ձայնածավալ, իսկ ձայնաշարը երաժշտության մեջ այժմ այլ հասկացություն է։

Մեր կազմած «Համբեաթի» հայերեն թարգմանության բառարանը մատնացուց է անուում այս կարգի թարգմանական թերացումները, շեղումները, ճշտում ու որոշակի բացարձում է այն բոլոր բաների նշանակությունները, որոնք սովորական բնթերցումով մութ են մնում։

Բառարանում հափարված և համապատասխանորեն բացարձակած են հարյուրավոր գարձիքածքներ, որոնցից շատերը նոր են մեր լեզվի համար և առաջին անգամն են բառարանի մեջ հաստաբուլում և փաստորեն նոր են շրջանառության մեջ գրվում։ Այդ գարձիքածքները արգեն իրենց օտարարանական երանգը կորցրել են և մերվել են մեր լեզվի գարձիքածարանական հարուստ համակարգի հետ՝ իրեն նրա լրացման ու ձոխացման կենսարաշխ աղբյուր։ Մասեհյանը Եկեղեցիքի գարձիքածքների դիմաց որբան հնարավոր է տվել և համապատասխան հայերենը, բայց երբ գա հնարավոր չի եղել, կամ այն պատճառով, որ հայերենը զուգագիրը չի ունեցել, և կամ այն պատճառով, որ այդ զուգագիրը խախտել է Եկեղեցիքի ոճի կուռ ամբողջականությունն ու վեհությունը, ապա ինքն է կազմել դրանք, որ կերպանցապես հաջող են և արգեն «Համբեաթին» բավ ծանոթ մեր ծողովդի համար հարազատացել և հայացել են։ Այդպիսի նոր գարձիքածքների ճաշակը տալու համար բերենք մի բանիսը. իր բախտը գրկել, բախտի մատերին շվի լինել, ականչը բռնադիմատել, ականջների վրա հարձակում գործել, ականջին հանձնել, ձեռքի ափը կոշտացնել, վարձը ձեռքը տալ, ձեռքի տակ շարություններ ունենալ, մահվան ավանդվել, առաքինություն ստանձնել, ձեւ առնել, ողջույն արձակել, արյունը այրել, մեկի վզին բարդվել, բուզը թռչել, աշքից բան գողանալ, ապրել բախտի գոտու մոտերքում, դատողության իշխանությունը խլել, ծառայությունը ոտքի տակ դնել, փորձի դնել,

ոլորտքից դուրս թոցնել, այդի թոշուն, հին լաթ շինել, դաշումներ խոսել, խոսքին հարթություն տալ, սուր խոսքը քնում է հիմարի ականջում, և այն, և այլն, սրոնք անխտիր հավաքված և համապատասխան տեղերուամբ քերպված հն ու մեկնաբանված:

Մեր բառարանում անհրաժեշտության դեպքում նշվում են նորաբանությունները, որոնք անհրաժեշտաբար ստեղծել է Մասեհյանը: Ահա այդ բառերից մի քանիսը. ազմկահուզ, ամեհանալ, ամփոփաբան, առաջընթաց, առաքինացուց, արգելանոց, բանդախուզ, բարձրահրնչյուն, բանդանոց, բացորոշ, գագաթնակետ, գաճռնկերուհի, դյուրախար, դյուրամեռ, երկնահամբույր, երկնամաս, վինամարտ, ինքնահարձակվել, գուգախառնվել, ինքնազո՞ն, խաղասուր, խողավայել, խոհիկ, խովամազ, կայթպար, կայծասփյուռ, կարգախոս, կողաքարշ, հարսնասեղան, հարցահուզ, հյուսարձակել, ձայնաշար, մելանագույն, մեծաբարբառ, միշնաժամ, նախատաշ, նախերգ, նախերգակ, ոսկեից, որոգայթապատ, շարանենգություն, չքմեղել, պատիրք, ուղղակուռ, սանձաղուրկ, սանձակուռ, սիրմատել, տարբերույթ, ոմայնասեր, փակարան, քաղցրաբույր, քնանոց: Մանրամասն քննությունը կարող է այս ցանկը ավելի մեծացնել: Մասեհյանի նորակազմ բառերը այնպես կայնք են մտել ու հարազատ արտահայտություն ստացել, որ շատերի նորակազմ լինելը այլևս չենք գիտակցում:

Թարգմանիլը մի երկու նորակազմության մասին իր կարծիքն է հայտնել, որ ավելորդ շենք համարում բերել: «Խոհիկներ, viola tricolar, այս բառը մենք ենք շինել նմանությամբ ֆրանսիական քենը բառի: Կայթպար. պետք զգացինք այս բառը կազմելու, նշանակում է մի պար, որի մեջ պարողները վեր-վեր են ցատկում»³:

«Համլետի» հայերեն թարգմանությունը հայոց լեզվի մի հարուստ թանգարան է, որի առանձին բառարանը ոչ միայն այդ թանգարանի հազվագյուտ զարդերի դասդասման, բացատրությունների ու մեկնաբանությունների ամփոփաբան է, այլև օժանդակ աղբյուր հայոց լեզվի նոր բառարանագրության համար:

Ս Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Բ

1. Բառարանը կազմված է Վ. Շեխտիր, Ընտիր Երկեր, Տ. I, 1951 թ. հրատարակության հիման վրա:
2. Տե՛ս «Համլետի» Վիեննայի 1921 թ. հրատարակության I արարվածի 4-րդ տեսարանի 40-րդ տողի ծանոթությունը:
3. Տե՛ս նույն հրատարակության ծանոթագրությունները: